

ՆՈՐ-ԴԱՐ

№ 79 ՏՄՆԵՒԻՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հարած, 9 Մայիսի

1898

Հարած, 9 Մայիսի ՏՄՆԵՒԻՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 79

Տարեկան 10 ռուբլի, վեց ամիսը 6 ռուբլի, երեք ամիսը 3 ռ. 50 կ. Թիֆլիսում ամիսը 1 ռ., հասուկ 5 կ. Բաժանորդ գրուած են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցեն՝ Тифлисе, Редакция „Нор-Даръ“ կամ Tiflis, R/daction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամէն օր (բացի տօն օրերէն) ժամը 9-ից մինչև 2-ը: Ցայտարարութիւնները ընդունուած են ամէն լիցաներով: Ցայտարարութիւնները բաժին 2 կ., լրեկամները համար կրկնապատիկ



ԲՈՂԱՆԵՐԿՈՒԹԻՒՆ

Առաջնօրէն զ. — Վերադարձէք:
 Քրոնիկոն. — Լուրեր:
 Մեզ գրում են. — Հուշաց, չին-
 նախիջանից:
 Քուրբերը Գախտամի ստորին մասե-
 լում:
 Կրթութեան անկիրթներ:
 Նամակ խմբագրութեան:
 Քաղաքական. — Սպանիա-ամերի-
 կական պատերազմը: Խոսքով ինններ-
 նասիայում:
 Խառն լուրեր:
 Հեռագրեր:
 Թերևս զեմ:
 Քանաքաղաքի և Երևանի միջև:
 Տեղի կատար:
 Յայտարարութիւններ:

Թիֆլիս, 8 մայիսի 1898 թ.

ՎԵՐԱԿԱՐԳՆԵՐ

Ինչպէս որ մինք հրատարակեցինք, կառավարութեան կարգը լինելու միջոց է արդարեւ մեր կողմերը Հայաստանից գաղթած հայերին վերադառնալ հայրենի երկիրը:

Չգիտեմք թէ՛ Պոլսի հայոց պատրիարքարանը ինչ միջոցներով է ձեռնարկել հայրենիք վերադարձող գաղթական հայերի մուտքը թիֆլիսեցիներու և կացութիւնը ապահովելու համար, բայց

որ նրա պարտն է և ձեռնհաս է այդ մասին հոգալու, չենք տարակուսուած:

Գաղթականները լաւ կանին, որ չհետեւն հրէաների օրինակին և ամէն տեղ ու ամէն օր հայրենիք չ'որոնեն, որպէս զի չ'հեթարկուին նոյն ճակատագրին և պատուին:

Թէպէտև հրէաները իրենց ահապին կարողութեամբ, իրենց մտաւոր եզակի ընդունակութեամբ գերազանցում են հայերին. նրանք գրաւել են և իրենց ձեռքն են ձգել Եւրոպայի կենդրոններում թէ՛ բորսան և թէ՛ մամուլը, բայց ո՞վ է այն մարդը, որ նախանձ է հրէաների վիճակին, հրէաների համբաւին:

Ժամանակ է, որ գաղթական հայերը վերադառնան հայրենիք. ժամանակ է, որ վերջ գրուի «գաղթականութեամբ» ապրողների «վիշակին»:

Իւրաքանչիւր հայ հասարակութիւն պարտաւոր է թշուառութեան մտածուած անօգնական գաղթականին, ըստ չափու կարողութեան, միջոց տալու և օգնելու, որպէս զի գրանք վերադառնան հայրենիք. բաւական է, ինչ որ աստանդական կեանք վարեցին, բայց միևնոյն ժամանակ պէտք է ստիպողական մի-

ջոցներով դուրս քշել նրանց, որոնք գաղթականի դիմակի տակ գրաւուած են ժողովրդի ողորմածութեան զգացումները հարատւաբերու գործով և խարբայութեամբ միամիտներից փոց են կորցում, հաշի աշխատանքից խոյս են տալիս և մուրացկանութեամբ ձեռք բերած վտղիբով պորտաբայթի կեանք են վարում, իսկ այն կողմը ճշմարիտ օգնութեան կարօտ գաղթականը մընում է մի կտոր ցամաք հացի կարօտ:

Ժամանակ է, որ վերջ գրուի այդ մուրացկանութեան:

Բարեգործութիւնը միայն այն ժամանակ է բարեգործութիւն, երբ նա բարիք է առաջ բերում և ոչ չարիք:

Հայրենի երկիրը ամայի գարձնել, աշխատանքի ընդունակ մարդկանց պորտաբայթութեան վարժեցնել և միջոց տալ մարդկանց խարբայութեամբ ապրելու, դա բարեգործութիւն չէ, դա չարութիւն է:

Մայիսի 1-ից ց31-ն ղեկավարութեան «Նոր-Դար»-ին բաժանորդ լին գրում եւ վճարում են 7 ռ. 25 կողմէ:

Ք Ր Ո Ն Ի Կ Ո Ն

Իւր ժամանակին հարողեցինք, որ հանդուցեալ թիֆլիսեցի Գեորգ Աւետիսեան Տիֆլիսեանց իւր կտակով, որ հաստատուած է Տարաբարութիւններից 17-ին, աւանդել է Գեորգեան ձեռնարկի վարչութեանը կատարել, ի թիւս այոց, հետեւեալ պարտականութիւնները:

ա. Կապի 4 յօդուածով որոշուած է հինգ հազար ռուբլի, որի ստիպելով պէտք է ապուին հայերէն դասագրքեր և ձրիաբար բաժանուին շքաւոր հայ երեսնամեակին:

բ. Կապի 7 յօդուածով որոշուած է երկու հազար ռուբլի իւրի մրցանակ այն հեղինակին, որը կըրկազմէ եւ կըտպէ հայրենի լեզուով հայոց արժանատի բաների բառարան:

գ. Կապի 8 յօդուածով որոշուած է երկու հազար ռուբլի իւրի մրցանակ այն հեղինակին, որը կըրկազմէ եւ կըտպէ բառարան հայոց հոմանիչ բաների:

Կէօմ Մայր Աթոռի հոգևոր ձեռնարկի վարչութեան «Արարատ»-ի միջոցով հրատարակուած է ձեռնհաս անձերին մինչև 1899 թուի յունուարի մէկը ներկայացնել վարչութեանը իրենց պատրաստի աշխատութիւնները թէ՛ դասագրքերն և թէ՛ բառարանները՝ կատակի ստիպողութեան համեմատ քննելու ու անօրինակու համար:

Հայոց թատրոնի քրոնիկան աշխատարար պ. Աղամ Սարգսիսեան-Երեւանահար պատրաստել է 5 արարածով մի նոր գրամա «Հարեմ կամ Ջուրէլիզա»

անունով, որի նիւթն առել է հայ մատենագրներից: Այդ նոր պիէսի ներկայացման համար հարկաւոր թոյլտուութիւնն արգելն ստացուած է: Հեղինակը մտադիր է «Հարեմը» առաջին անգամ ընտ հանել թատերադրների մասնակցութեամբ և առաջին ներկայացման արգելները յատկացնել թատերական մի ֆոնդի, որով մտադրութիւն կայ ստալիկայ սեղոնին հայոց գրամատիքական խումբ պահելու Թիֆլիսում:

«Արարատի մէջ Սինդի օրագրութիւններից պարուած են, ի միջի այոց, հետեւեալ քաղաքները:

4 մարտի. Սինդը վճուց հրամայել Աստրախանի կոնստաբլիային մասնագրական Սարգիսեան Ինչիզու 2ուրմանտիւն միլիտարիստ ընդունել Հայոց եկեղեցու ծոցը:

6 մարտի. Սինդը լսելով Աստրախանի կոնստաբլիայի թ. 84 յայտարարութիւնը, որով նոյն թիւի առաջնորդ խնդրում է Սինդի թոյլտուութիւնը Աստրախանում մտի գործարան բանալու համար, վճուց մերժել առաջնորդի խնդրը:

6 մարտի. Ըստ բարեհաճ կամայ Վ. հափառ Հայրապետի Սինդը յայտնեց Երևանի նահանգական դատարանին նախագահին, որ Մայր Աթոռի հոգևոր ձեռնարանը համաձայն չէ թոյլ տալ, Վիլնիայում վարձանուած ուսուսպատակ Կոստանդին Վարչաձեռնի յանուն ձեռնարանի կտակած գումարից ուրիշներին մաս հանելու, այլ ցանկանում է հանդուցեալի կտակը ի կատար ածուած տեսնել խկութեամբ:

13 մարտի. Սինդը վճուց հրամայել

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՇՈՒՆԻՆ ՍԵՐ

Ի՞նչ անոյշ օրեր էին անանք, ի՞նչ քաղցր տարի: Ես դեռ ոչին իւր չափու-
 վանց պարզ, միամիտ ու սահմանափակ
 կերպով ըմբռնած էի այն տունը. միայն
 դիմելի թէ մարդ պէտք էր սիրել իւր
 Աստուածը, ծնողքն ու ընկերը, որովհե-
 տի այդ տարիքս մէջ դիւ շրջապատող
 անձինք իմ ներկայութեանս երբէք չէին
 խօսած ու չէին ալ խօսել սիրային
 անցքերու վրայ: Այսպէս ես տակաւին
 բանէ մը տեղեկութիւն չ'ունէի:

Բայց օր մը, սեպտեմբերի աղտոյր օր
 մը, օր մը՝ զօր ես չ'պիտի մուտնամ
 բնաւ իմ կեանքիս մէջ, հախառակ իմ
 ծնողքիս կրկնակի պատուէրներուն՝ ես
 սոլոյակական շարձմանութեամբ մը նորէն
 մեր պարտեղի թղնիկին վրայ կայ գաղ-
 տագողի՝ արհամարելով իմ տաննեակի
 անկուսնեքս այդ շարագուշակ ծառին
 վրայէն:

Թղնիկն բնանտարած էր այդ տարին
 իւր քաղցրահամ պատուհնով, և սուշ-
 թամ սէլիւն իմ ամենէն սիրած սլը-
 սուպիներս մէկն էր. այնչափ կրկնակի
 սոլ թուրք, որչափ սեղեկէր: Սկսայ
 շահագործութեան՝ միշտ աւելի մեծերն
 և աւելի հասունները փնտաւելով լայն տե-
 րններուն տակէն, սրտնց ետև պահուած
 էին առհասարակ այդ օրամիտ պտուղ-
 ները՝ իմ սրկըմտութիւնս աւելի շը-
 գրգուխու համար:

Բաւական ուտելէս և շորհիս շափա-
 ղանց քաղցրին, որ սիրտս տուած էր
 արդէն, իմ փորիս զոհանցում ապէս վեր-
 ջը բովի պարտեղէն, մինիսիկ, հնչիւն
 ձայն մը լսեցի որ կ'ընէր.

— Ես տեսայ որ դուն շատ կերար,
 հաս մին ալ ինձի կուտան:

Գլուխս մեքենայարար այդ կողմը դար-
 ձուցի և տեսայ որ ինձի հաստակից
 10—12 տարեկան աղջիկ մըն էր:

— Կուտամ, ինչու չէ: Բայց ըսէ ինձի,
 ինչ է քու անունը:

— Իմ անունս Վարդանայ է:

— Մականունը:

— Ի՞նչ պիտի ընես: Ջանքման... Նա-
 լէ, նայէ. ոս ճիւղին վրայ կ'ըսէ թող
 մը կայ, շատ հասուն է, ան տուր ին-
 ձի:

Ես դարձայ, բովի ճիւղին վրայ կայ
 ու թուրք փրցուցի: Յանկարծ միտք մը
 վայելեցաւ պիտի մէջ: Ա՛խ, ես սրչափ
 ուրախացայ:

— Գողտցոյ բնց օր մէջը ձգեմ. շատ
 կ'ըսէ, եթէ գետինը ինչայ կըճեղքու-
 թէ ես սր ատրիճանս ուրախացայ՝ երբ
 տեսայ որ նետած թուրք իւր նպատա-
 կէն մազի շափ չ'չեղեցաւ: ձիւս գեմբին
 զարկած էի: Ես ծիծաղեալ թուրքայ,
 իսկ ան նեղացած էր:

— Ու՛ր, ինչ շար աղայ ես դուն:

— 25, իրաւ որ չէ, բախ միշտ խն-
 դարով:

— Այ տեսակ կատակ կ'ընեն. ամ-
 բողջ զեմքս անուշաւ:

— Է՛հ, միտս չ'ունի, ես լզկով կը
 մաքրեմ:

— Է՛հ... շնոր... տուն երթամ և և-
 րեսս լուած:

— Նորէն կերու, որ քեզի թուրք տամ,
 հա... չ'ես գիտեր, Վարդանայ, այս տա-
 րի մեր թղնիկն սրչափ առատ և հա-
 մեղ պատուհեղ տուած է: Կուտան, չէ:

— Գամ որ նորէն ստանի շարթիւն-
 ներ ընես. չ'եմ ուզեր. չէ, շորհալայ եմ:

— Իրաւ որ չէ, Աստուած վկայ: Կու-
 դաս անանկ չէ:

— Մէկ մըն ալ տանի անհամ կա-
 տակներ չ'պիտի ընես. կըրտատանս:

— Նորէն չ'ես հատար կոր: Ես կա-
 տակ չ'ըրի. գիտուած էր, գիտուած:

— Հը՛մ, գիտուած...:

Ան քայլերն ուղղեց դէպի տուն: Ես
 ետեւն պտուղի:

— Վարդանայ, կըրտատեմ քեզի. երբ
 նորէն, մէկ մըն ալ չ'եմ ընես:

— Սղտո՛ւ. պիտի դամ հիմա:

Ան ներս մտաւ: Ես ուրախացայ որ նո-
 ղէն պիտի վերադառնայ այդ աղտոյր աղ-
 ջիկը: Սկսայ վերի ճիւղերուն վրայ շու-
 լուել և ամենէն հասուն թղնիկը փնտաւել:
 Երբէք չ'եմ մտածար, այս օրուան
 պէս միտքս է. տանըմէկ հատ խոշոր,
 քիչ մը թուած թուրք դաս բարձր
 ճիւղերուն վրայ ու հաւաքելով գանձը՝
 վարք պտուին վրայ ինչայ և սպանցի
 Վարդանային. ինչ բոնեմ. խնթի մը պէս
 սպանցի:

Սպանցի հազար ու մէկ երեկայու-

թիւններով, որոնց կ'ընկերանային թէ
 մանկական ուրախութիւնը և թէ անհամ-
 բերութիւնը:

Ներքէն, անոնց տունէն աղտոյր, մեղմ ու
 թրթուռն ձայն մը լսեցի, որ կ'երգէր
 կրկի մը վերջին տողերը:

Ախ, ինչ ընեմ, ըսէ, սրտիս իմ հատը,
 Արեւս կ'ոգեա՛ թող վազ բարդ,

Չայրը հետզհետէ մօտեցաւ և մօտե-
 նալով մարեցաւ: Ան դուրս եկաւ:

— Հա, Վարդանայ, մի՛ կը ան երգողը:
 — Ի՞նչ կայ. ես էի:

— Ի՞նչ աղտոյր ձայն ունիս կեղեր, նո-
 ղէն երգէ, ինչու լսեցիք:

— Ուրիշ տանն. հիմա թուրք պիտի
 տես ինձի, անանկ չէ:

— Այ: Գիտես, քեզի համար ամենէն
 հասուններն հաւաքեցի, տես, ձեռքերս
 լիցուն են. տասըմէկ հատ է. ասոնք
 կեր եթէ նորէն ուզես՝ գարձեալ կը
 քաղեմ:

Մէկիկ-մէկիկ նետեցի գողտցուն մէջ
 տանըմէկ հասուն ալ և պտուին վրայ
 նստեցայ՝ ոտքերս դէպի անոնց պտ-
 ալըր կայտած: Ան իրենց տան պարտե-
 ղին դրան սեղին վրայ դնաց նստեցաւ
 և սկսաւ կեղեկել և ուտել:

Ես խօսակցութեան նիւթ կըրկուտէի
 միշտ՝ աղու և սիրականի շարակրտու-
 թիւններ ընելու համար: Յանկարծ հար-
 ցուցի:

— Վարդանայ, դուն ի հարկէ, դպրոց
 կ'երթաս, սր դպրոցը, մըրը:

— Ո՛չ, ես Մեսարիսեան վարժարան
 կ'երթամ:

— Մեղադրեան վարժարան:
 Ես դարձայ ու հարցուցի:

— Բանի տարեկան ես դուն:
 Ինչու հարցուցիր. տասներեք:
 — Տասներեք:

Ան ժպտեցաւ և հարցուց թէ ինչ էր
 արդեօք պատճառը դարձանալուս:

— Ոչինչ, այնպէս, ըսի:

Ալ իմ պիտու մէջ սկսաւ թանձրանալ
 մտածութեան մէջը: Չարմանալի եւ պրզ-
 ալիկ տարբերը. անոնց վրայ դպրոցի
 անունը շատ մեծ ազդեցութիւն ունի:
 Ես մտադրեցի երկուդին հօրս ըսել, ստի-
 պել որ անպատճառ զիս Պէրպլեանս
 վարժարանը դնէ: Ես այն տունն կըրկա-
 ձէի որ միայն գաղտնիքը շատ բան կը
 ստիպեցնէ աշակերտին: Աշխատութեան
 մասին երբէք չ'էի մտածեր:

Անոր հետ խօսելու անյազ մարմաջը
 ստիպեց զիս կըրկողը հարցում մըն ալ,
 ընել: Թուարանութեան մէջ ես այն տա-
 տիճանով յաջող ու բարձր էի իմ ընկեր-
 ներէս որ ատրիճանով որ սկսեր էի
 մարմնամարզութեան մէջ: Պղտիկ լուռ-
 թիւնէ մը վերջն հարցուցի.

— Ո՞ր կարգն ես դուն:
 — Ե՛ս. Երկրորդ կարգը:
 — Ես ալ: Ընէ տեսնեմ, թուարանու-
 թեան սր տեղի էք հասած:
 — Մըրը. Մախնակեան արտադրիչ
 ներքը լմալու վրայ կ'ըր: Գալ շարթու
 հասարակ կոտորակ պիտի սկսիք:
 — Ի՞նչ:
 — Հատարակ կոտորակ:
 — Հատարակ կոտորակը ինչ է:
 — Օ՛հ, չ'ես գիտեր, ուրեմն դուք
 մեզմէ շատ ետ էք մնացած:
 — Մըրը շորս գործողութեան խառն
 խնդիրներն ենք:
 Ան ժպտեցաւ:

բանից վրայալան ունենալ և այդ վրայալանի երեսով ընկնել անէ առն և ցոյց տալով պաղատել, որ իրեն քահանայացու ընտրեն, այդ բանը, եւ կարծում եմ, թոյլ չի տալ իրեն ոչ մի մարդ, որ հասկանում է կրթութեան նշանակութիւնը, որ ինքնասիրութիւն ունի, իսկ եթէ դատուում են մարդիկ, որ այդպէս են վարուում, ապա զբանով նշանը արտատարում են այն ուսումնարանի պատիւը, որտեղ նրանք աշակերտի են...

Մի երկրորտարդ, որ աւարտել է մեր միակ ուսումնական բարձր հաստատութիւնը՝ Ս. Եղիշանի ճեմարանը, թոյլ է տալիս իրեն ճեմարանի պատուին աւարտ քերտոյ ստորութեամբ ստորակել այս կամ այն ժխականի տունը և իւր քահանայանալու համար ձայնիւր մուրալ, իրեն պաշտպան և մեկնեալ ունենալով մի քահանայ... Այդ երկրորտարդ պաշտպան է ունենում նաև նախալին աշխարհի մի շարք կառավարիչներին, իրենց կրթութեամբ պարծեցող այդ լուսնաբաններին, որոնք միայն մի յատկութիւն ունին, այն է՝ ազգայինների մի բարձրակարգ ու գեղեցիկ ցուցահանդէս կարող են ստալել... Գրանք էլ իրենց կողմից գիտական քեօթիաներին վայել միջոցներով մերթ սպառնալիքով իրենց ստորագրեալներին և մերթ խղիղելով իրենց անկանխելի, այլ և պախարակելով, զբարբալելով իրենց կարծեցեալ ախոյաններին, աշխատում են մեծացնել ձայնի թիւը...

Եւ սակայն այդ մարդիկ արդարացիում են իրենց վարմունքը, աւարկելով որ իրենց թեկնածուն կրթութեամբ մարդ է, այնքան կրթութեամբ, որ թոյլ է ապախ իրեն նրանց սուրբ լիցիւր... Եւ այդ մարդիկ, կրթութեամբ են համարուում... այնքան կրթութեամբ են, որ նրանց վարմունքը անկիրթ մարդկանց է միայն վայել...

Գրանք կրթութեամբ անկիրթներ են, որոնք անպատուութիւն են բերում կրթութեան ընդհանր արտատարում են այն բոլոր մարդկանց ու հաստատութիւնները, որոնց հետ այդպէս թէ այնպէս կապուած են զբանց անունները...

Այդ մեր խոր համոզմունքն է...
Ն. Ս. Տէր-Մանուկեան:
Բազու, 6 մայիսի:

լորդ չի լինիլ այդ ծանծաղ գրութեան շարժումով կամ զրկել պատճառներն էլ լսել. Թորոսեանցի վարմունքը հասկանալի է... զո մնայ Միայն երկու ուսուցիչներն ինչ սասցին, որ հերքելու կան իրենց դեկուցումը. ահա թէ ինչ՝— պ. Ի. Ջուր.—ը սաստիկ գրգռուած է նախ այն հանգամանքով, որ մի քանի անհատների մօտ իբր թէ տեսչութեան հասնելու տեսչանքով խուճկ ծիւրը հրապարակ է հանուած. երկրորդ այն հանգամանքով, որ վարչութեան զեղծումների մասին մեղադրանքներ միմյանն Ա. Տ.—ին է վերագրուած: Այ դուք անագինի, կոյր և... և... հայրն թղթակիցներ, ինչպէս էք համարձակուում ազգասէրների այն, այն, այն այնքան օգտակար գործունէութիւնը վատարանել, այն լուսոյ պէս պայծառ ճշմարտութիւնն այդպէս աղօտ կերպով նկարագրել... չէ որ միայն Տէր-Մանուկեան չէ եղել, չէ որ ես էլ եմ եղել... ստուծ մեր Ի. Ջուր.—ը լայնակամոմ. արդար լարելով են: Միւս կողմից էլ՝ չէ որ խաթըր խաթըրն կապուած է. «անք և տայի ձեզ» առում է աւետարանը. հնձելու համար պէտք է ցանկել. ինչ նշանակութիւն ունի թէ՛ հարկադրուած ենք ստորագրելու օգտակար անհատներն արդարացիոց գրութեան: Վերջապէս սի պէտք է հետաքրքրուի և իմանայ մարդու խորին խորհուրդը: Իսկ Ա. Տ.—ի նկատմամբ ճիշտ է ստուծ պ. թղթակիցը թէ՛ կեանքի սեկուցումներն անձանցով է. այն, անձանցով է, հաստատուած ենք մենք. սրբոյնեան նա պիտի իմանար, որ չի կարելի ճշմարտութիւնը այդքան էլ վատարանար քարոզել, այնտեղ, որտեղ օգտակար անհատները շահերն աւելի բարձր են. բայց անկործ պարտն այժմ փորձուց և համոզուց, որ մինքն բնիւր համար բաւական չէ միայն ատուներն ունենալ, այլ պէտք է նաև շահելու և ճարտակութիւն կա, ապա թէ է, մինչդեռ այդպէս պոչը կրկնեն: Ա. Տ.—ն ևս հարկադրուած եղաւ ստորագրել—դա փորձանութեան առաջին քայլն է երկրորտարդ պարտնի կեանքում. ցանկանում ենք յաճողութիւն ապագայում: Երկու խօսք ևս. պարտեք Ի. Ջուր.—եաները կարծում են թէ՛ վերոյիշեալ թղթակցութիւնները «ստպոնի փամփուշտներն են և գրուած են հասարակութեանը մտրեցնելու համար» և թէ՛ «այս բոլորից (!?) երեսուէ, որ փաստերը յեղաշրջուած են» (sic): Գործններ, խոհեմ եղէք, իմացած եղէք, որ ձեր և ձերնց գրութիւնը խոր ցեխում խրուած գրաստի նման է. որքան պոչից կամ ականջներից բռնէք և չ'ուհա՛ չ'ուհա՛ անէք գուրս բերելու նպատակով, այնքան էլ խոր կըլրուէք... որով հետև զէն վաղ էր, որ էէր կաղ էր»։ Ականուի ինք վարուց է հմաձաշ ցնցողի դարձել և շարտուել. այժմ արևի պէս պայծառ ճշմարտութիւնը պիտի խօսի. սարքեցէք ուրեմն և փախէք նրա արդար ցասումից...:

2այն բազմաց
Չուշի, 5 մայիսի:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍՊԱՆԻԱ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՐԸ

Պատճառաւոր հողորդուում է, որ սպանական նաւախուրը չի վերագրուած Կարգիւ, այլ գտնուում է Անախիան ջրերում, ուր ամերիկացիների համար մի շարք անպաշտ ընդհարումներ են տեսի ունեցել: Այդ ընդհարումների մասին ամանութիւնները դեռ ևս յայտնի չեն, բայց այժմ իսկ պարտկոյ չկայ, որ Սպանիային յայտնի այնքան էլ հեշտ չէ, ինչպէս կարծում էին սկզբում: Եթէ հաստատուք հեռագրներին, ամերիկացիներին մինչև այժմ յաջողուել է միայն երկու վաշա զինուոր ափ հանել Կուրա կղզին: Ինչ վերաբերում է Կուրայի սպար-

տաներին, նրանք, բոտ երեւոյթին, չեն էլ կամեցել, որ ամերիկացիները մանեն իրենց հայրենի կղզին: «Standard»-ի թղթակից Գի. Վետտից հեռագրում է, որ այդ քաղաքն են վերագրուած Միացեալ Նահանգների կողմից Կուրայի սպատանների մօտ ուղարկուած պատուիրանները: Գրանցից մէկը գրուած է անեցել սպատանների զօրավար Գոմեցի հետ, որը նրան ստիկ է: «Սպանիացիները խեղադար ժողովուրդ են, բայց նրանք քաջ են և լըստասիրտ, և աւտուաղը վից ախի է հարկուոր, որ դուք կարողանար արտաքսել նրանց կղզուց: Նրանք կըկրուուն մինչև վերջին ոյժը, և դուք այստեղ լսեալ շատ անախարժութիւնների կրճանդիպէք: Պահարոււր կատարիւպէս հնարար և լաւ բան է, բայց դըրանից հետո մի դնոր: Ես չեմ կարծում, որ ձեզ յաջողուի սպանիացիներին իրենց յօժար կամով հեռացնելու Կուրայից: Մենք չենք կամենում, որ ամերիկական զինուորները այս կղզին գան: Թող ամերիկացիները գրաւեն միայն նաւահանգիստները, կուրացիներն իրենք կըվերջացնեն միւս գործը, եթէ նրանց հարկուոր պէնքն ու պաշարը տան: Մենք նահանգներին ոչ թէ մարդիկ ենք ուղում ստանալ, այլ—ազգամութեք: Մեկ թիւղանութներ, հրայաններ, փամփուշտներ են հարկուոր: Ուղարկեցէք տասնութեամբ, և մենք կըլրալմենք սպանիացիներին: Կղզու խորքերում պատերազմը ևս կըվարեն իմ սխաւումով: Ամենից առաջ իմ ոյժերս կըմիացնեմ Գուրայի ոյժերի հետ, և այն ժամանակ մենք միքանի վճռական ճակատամարտ կըկռուէք: Մենք շատ շուտով առաջ ենք շարժուելու գէպի հաւանաւ, բայց նախ քան այդ, մենք պէտք է պաշար ունենանք: Ասացէք ամերիկացիներին, որ այդ պաշարն ուղարկեն մեզ: Մեղ պէտք չեն Ամերիկացի զինուորները: Գուցէ մենք կըկանչենք յետոյ, երբ անձրևների շրջանն սկսուի: Եթէ ամերիկացի զինուորները գան այժմ, ճանձերի պէս կըկտորեն անկողի, ինչպէս կտարուած են մեզ մօտ երկր սպանիացիները»:

Միւս պատուիրանն ստուծ է, որ Գոմեցի այդ խօսքերը ցոյց են տալիս նրա փառասիրութիւնը, նա իւր ձեռքի տակ ունի ընդամենը 3,500 կուրացի սպարտուոր: Նա ասում է, թէ կարող է ժողովել 30,000 մարդ, բայց զրանք պարապ խօսքեր են: Գնեալ Գոմեցի տեսում է, թէ ինչպիսի անհամ գրութեան մէջ կըլինի ինքը, երբ ամերիկացի զինուորները գնան կղզին և կանստուար պատերազմ մղեն: Այդպիսով, եթէ ամերիկացիները զօրք հանեն կղզին, նրանք չեն կարող յայտնել դինի Գոմեցի օգնութեան վրայ: Նա օգնութիւն չի ցոյց տալ, չի կամենալ ցոյց տալ և չի էլ կարող: Ահա թէ ինչու, եթէ զօրք ափ հանուի, ուշաք է այդ զօրքը մեծ լինի:

—Ամերիկացիներն սննտան արտաքին գործերի յանձնաժողովի նախագահը (Times) — թղթակցի հետ խօսելով տակ է, որ սննտան յանձնաժողովը կառաջարկի միացնել Ջուայի կղզիներն և Գորտո-Ռիկոն: Ինչ վերաբերում է Ֆիլիպպիններ կղզիներին, յանձնաժողովն այն կարծիքն ունի, որ այդ ինդիլը պէտք է ուսումնասիրուի: Բայց նախապէս պէտք է որչափ սկզբունքի մի ուրիշ ինդիլը. նահանգները պէտք է արդեօք, Չինաստանի պէս, յարաւտ փակուած մնան իրենց սահմաններում, թէ արժանի տեղը պիտի բռնեն զաղթային միւս պիտուութիւնների շարքում և, տիրելով Ֆիլիպպիններ կղզիներին, ապագայում նշանաւոր աղբեղութիւն ունենան Կուրայի Երեւելի ինդիլների վրայ: Ինչ վերաբերում է կուրացիներին, նրանց իրաւունքը կըլրուի ընտրելու ինչ կառավարութիւն որ ուրեմն:

Այդպիսով ամերիկացիները կամենում են անցնել երազական պետութիւնների շարքը: «New-York-Journal»-ը յայտա-

բարում է, թէ «շուտով կըլրայ այն ժամանակը, երբ օտարերկրացի (զբանց թըրուում և անգլիական) ոչ մի գրօշակ չի ծածանիլ մայր ցամաքի և արեւմտեան կիսագնդի կղզիների վրայ: Աւելի ևս. 300,000,000 բնակիչ ունեցող Միացեալ Նահանգները, տեսչին հարատուութիւններ ունենալով, կըլրեկավարեն Եւրոպան, որը բաժանուած է պատակուումների և մըրցութիւնների շնորհիւ: Եւ այն ժամանակ մեծ հասարակագետութիւնը կըլրատուի Եւրոպային: Նա կըլրախի Եւրոպային արձակել ժողովրդին ցեղի պէս ուսող իւր գօրքերը, զինաթափ անել իւր նաւերը, զազարեցնել իւր բոլոր վէճերն և հրաժարուել պատերազմներից: Ամերիկան քրիստոնէական մի մեծ աւարելութիւն կըկատարի, և օրինականութիւն կըմայցի, և այդ մեծ ուղարկուելի կըլինի հին Աշխարհի այդպէս համար: Կուրայի ազատութեան պատերազմը նախադոււն է ամբողջ Եւրոպան ազատելու միջնադարեան այն ծանր լծից, որի տակ աննշուում են նըրա ազգերը»:

ԽՈՒՈՎՈՒԹԻՆԵՆԵՐՆ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

«Köln. Zeit.»-ի հոտի թղթակիցը բացատրում է խաղաղան խոտովութիւնների պատճառները: Իտալական ընդդիմադիր կուսակցութեան բերան մամուլը այդ պատճառները կուսակցութեան այժմեան քաղաքականութեան մէջ է աւետում. յանկարծ կըճատուած են հասարակական աշխատեցնները, որի պատճառով հազարաւոր բանուորներ մնացել են սոված: Երեկայ միլիտարութեան կողմնակիցները, ընդհակառակը, մեղքը Կրիստիանի վրայ են ձգում, որը զօրեղ ճընշումներով զայրայթ է յարուցել պրոտետարիատի և ծայրայեղ կուսակցութիւնների մէջ, չուայրել է հասարակական դոււարները, հարկերն աւելացրել է և աչն: «Köln. Zeit.»-ը այդ վէճերի մէջ է մեծ ազդեցութիւն է գտնում մեծ մոլորութիւններ: Իտալական ժողովուրդն երկար տարիներ ճնշուում է հարկերի ծանր և անարդար սխտեմի տակ, որի մէջ ձեթորմներ մայցնելու դործին միշտ խանգարել է պարլամենտի մէջ արտոզ յասակարգների ետապրութիւնը: Գարաւմանի արեւապետութիւնը գործն այն բանին է հասցրել, որ ամեն մի նոյր միլիտարութիւն պէտք է ամենից առաջ հոգար իւր գրութիւնն ամբացնելու և պարլամենտում ունեցած իւր կողմնակիցներին գոհացում տալու համար, և ապա թէ մասալը ժողովուրդի բարօրութեան մասին: Գարլամենտի և ժողովուրդը երկու բոլորովին ջոկ և իրար հետ ոչ մի տոնչութիւն չունեցող աշխարհներ են դարձել: Ժողովուրդը վարուց այդ դուււմ էր և բոլորովին կորցրել էր իւր հասարակ գէպի կառավարութիւնը և ներկայ խոտովութիւններն ահա այդ հետեանքն են:

Այդ խոտովութիւնները նկարագրուում են սարսափելի գոնեւրով և ցոյց են տալիս, թէ համբերութիւնից դուրս եկած ճընշուած ամբան ինչեր կարող է անել: «Corriere della Sera» լրագիրը տալիս է, օրինակ, Միներլինո գիւղաքաղաքում կատարուած խոտովութեան նկարագրերը: Այդ գիւղաքաղաքն ունի 20,000 բնակիչ, որոնց գրութիւնը համեմատաբար լաւ էր. ամեն գիւղացի ունի իւր սեպհական հողարածիւնը և կեանքն էլ թանկ չէ: Այդպիսով անկարգութիւնների պատճառն ընդհանուր գրութիւնն էր, որին հետեւում է կառավարութիւնը և ոչ թէ ժամանակաւոր սովը, որ այս դէպքում չի էլ հղիլ: Մինչև մայիսի 1-ը Միներլինոյում այնպիսի խաղաղութիւն էր տիրում, որ 30 հոգուց բաղկացած տեղապահ զօրքը աւելի քան բաւարար էր համարում: Անկարգութիւնները սկսուեցին մի գաւառի բանից: Մի մարդ հաց էր գնում, հացթուիւր 40 սանտիմ էր պահանջում, գնողը պնդում էր, որ 30 սանտիմ վեր-

ցնի: Գործը հասաւ կուտի, որին միջամտեց ոստիկանը: Հուարուած ամբողջ մերձ իմա՛ ջարդեց ոստիկանին և գրանից յետոյ սկսեց իւր կատաղի վայրագութիւնները քաղաքում. ջարդելով, փշրելով գրաւեց քաղաքային խորհրդարանը, դպրոցները, տուրքերի գանձարանները, պոստատունը և այլն: Այդ շնքերի մի մասը կրակի մատնեց: Բարիտո ֆիլմայի մեծ ալքաբորժարանից յարկը տակեցին այրի պաշարները, բարձեցին էշերի վրայ և տարան իրենց տները: Ժողովրդական բանիկ փողի երկաթի մեծ պահարանը չկարողացան կտրել, ուստի կրակ տուին բանիկ շինութիւնը: Այնուհետև սկսեցին յարձակում գործել մասնաւոր տների վրայ: «Մահ քաղաքացիներին» լսուց ամբողջ մէջ, և կատաղած ցուցարարները ամենից առաջ յարձակուեցին հարուստ բեիչ Բրանալի տան վրայ, որի գուները սկսեցին ջարդել կացիններով: Բրանալին յուսամտաց մի քանի անգամ ատրճանակ արձակեց ամբողջ վրայ, առաջին գնատակը վերաւորեց մի տղայի, միւսը՝ գլուխը մի ուրիշ գիւղացու: Գրանից յետոյ ամբողջ ներս խուճեց առն: Բրանալին տանիքի վրայով փախաւ այդին, ուր սակին կատաղած ամբողջ հասաւ և կացինների ու դանակների հարուածներով սպանեց նրան: Նրա կինը մերձիմա՛ հիւանդ պառկած էր ննջարանում. ծառաները հիւանդին դուրս տարան արտուր, ուր և աւանդեց հողին, մինչդեռ տուրք կրակի բոցերը մէջ այրում էր: Բրանալի տանից ամբողջ ուղղուեց դէպի Բարիտո առնը, որի ալքաբորժարանն արդէն աւարել էր մասանել: Բարիտոը վատ համբաւ ունէր. նա յայտնի էր իբրև վաշխառու և գրանից մի քանի օր առաջ իւր տան եկեղեցում իւր բոլոր ծառայողների ներկայութեամբ գոհարանական մաղմանք էր կատարել տուել Մարոննային այն բանի համար, որ իրեր կարողացել էր ալրերի ցնենները 50-ական Ֆրանկներ ծախել: Բարիտոը, բայցի գրանից, յայտնի էր իբրև միլիտանտ: Տեսնելով մօտեցող ամբողջը, նա հրամայեց իւր ծառայողներն արձակել արձակել յուսամտաներից. երբ այդ ամբողջութիւն շարաւ, նա 1,000 Ֆրանկի մանր դրամներ նետեց գէպի ամբողջ: Այդ էլ չօգնեց. տուրք կտարեցին, և մի սարսափելի տեսարան տեղի ունեցաւ: Բարիտան ազաւում էր, որ իւր կեանքը ինային, խոտատուում էր հազարներ, տանեակ հազարներ տալ, յետոյ ապա՝ որ կըտայ իւր ամբողջ կուրորութիւնը, իսկ ամբողջ պատակաւորում էր. «Մեղ քո գլուխն է հարկաւոր»: Եւ ծերունի վաշխառուին սպանեցին կատաղած շան պէս: Բարիտոի կնոջը ծանր կերպով վրաւորեցին կայսի հարուածներով, իսկ երեխաները հաղիս ազատուեցին սարսափելի մահից. ամբողջ ուղղում էր նետել նրանց փողոցը պատըշղատից: Հարուստներն ընկաւ ամբողջ քաղաքը, ամբողջ մասնում էր բոլոր տները, ծեծում էր, յափշտակում, կրակ տալիս: Ութ ժամուայ վաղաբուութիւններից յետոյ միայն, վերջապէս, վըրայ հասան հարկան քաղաքի զօրքերը և ցրեցին ամբողջը: Միներլինոն թըրնամու աւերածութիւններին երկարուկուած քաղաքի տեսք էր ստացել: Չերքակալուեցին 250 հոգի, որոնց բանտարկելու համար տեղ անգամ չէր ձարուում:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մարդ առանց ստանորտի. — Բժշկական փոճերի մէջ ստամոքս անդամաւոր այժմ արդէն հազուադեպ բան չէ. բայց որ մարդու ստամոքսը կարեն ու դուրս հանն և մարդն ապրի զբանից յետոյ—այսպիսի օրինակ մինչև անցիալ 1897 թ. վերջը չէր պատահել: Այդ առաջին դէպքն է բժշկական պատուութեան մէջ: Հայկերեզի նշանաւոր վերաբոյժ՝ դոկտոր Չերեխ, 1878 թ. նման անպատուութիւն կատարեց մի շան վրայ՝ բոլորովին դուրս կարելով նրա ստամոքսը: Այդ շանը յայտնի էր

«Երեւելի» անուամբ, որ անգամատեղի- նից յետոյ 5 տարի ապրեց և, վերջապէս, ըս- տանցիկ նրան միայն ի սեր զօտնական նը- պատակները: Փոքր ճակատ յետոյ երեկոյս, որ ստամոքսի մի փոքրիկ կտոր անդամատու- թեան քաղկին մնացել էր, որը այնուհետեւ այն- քան լայնացաւ, մինչև ստալակի ձև ստացաւ ու սկսեց ստամոքսի սեղ ծառայել:

Սրանից երեք ամիս առաջ զոգտոր Ջիւստ- տերը Ցիւրիխում մի 56 տարեկան կնոջ ստա- մոքսի անդամատու թիւն կատարեց, բոլորովին հետաքննելով այն, իսկ կերակուրը ուղղակի մը- նում էր տասներկուամեանոյ աղիքը: Այդ ան- դամատու թիւնն անհրաժեշտ էր, որովհետև ըս- տամոքսում վերքերի բացուածները այն աստի- ճան գործը էին, որ հիւանդը չէր կարող նոյն իսկ ջրով կերակուրներ ընդունել: Այն պատ- ճառով, որ ստամոքսը ներկայացնում էր մի կոշտ, աճի, պինդ գանգուած և բարձրովին ան- պէտք էր ապագայ գործողութեան, դժ. Ջիւստ- տերը վճռեց բոլորովին հեռացնել: Այն անդա- մատու թիւնը յաջողութեամբ զուրկ գալուց յե- տոյ, հարց ծագեց, թէ ինչով պէտք է հիւան- դին կերակուր, ինչպէս օգնել նրան կերակու- րը մարտնչել ժամանակ: Աղբյուր հիւանդ կնո- ջը ասելն միայն ջրով կերակուր փոքրիկ քա- նակութեամբ՝ մի մի անգամ ընդունելու, կարճ ընդմիջումներից յետոյ: Հետևանքը լաւ էր և դրա համար էլ հետևեալ շաբթիկն հիւանդն ըս- կեց ընդունել փափուկ և ապա նոյն իսկ պինդ կերակուր, որ հիւանդի կերպով մարտնչել էր: Մի քանի շաբթի անցնելուց յետոյ՝ կարողանում էր մի օրուայ մէջ ուտել (2 և 3 ժամ ընդմի- ջումներից յետոյ) 1/2 լիտր (մոտ 2 բաժակ) կաթ, 2 ձու, 60—90 գրամ (մոտ 20 մխալ) շիւս, 210 գրամ միս, 210 գրամ զրուզով սուս, կամ վարսակով թթուաշ գարու, մի բաժակ թէյ, 15 գրամ իւր և մի քիչ էլ զին: Բժիշկը սկզբում անհանգիստ էր, բայց շուտով համո- յուեց, որ կերակուրը մէջ լինելի աղ և պեղպին զգիւր բոլորովին աւելորդ է: Նա գործարար, երբ մինչև անգամ հիւանդը փոխեց, որը նշան էր՝ թէ նոր կազմակերպուած «ստամոքսը» լի- քըն է արդէն: Որովհետև հիւանդը կարող էր արդէն միանգամայն 900 գրամ (երկու ֆունտից աւելի) կերակուր ընդունել, Ջիւստտերն այն նմանազանութեան եկաւ, որ տասներկուամեանոյ աղիքի մի մասը լայնացել և դարձել է ստամոքս: Այս փաստից բժիշկները դուրս են բերում հե- տևեալ եզրակացութիւնները. 1) մարդու ստա- մոքսը անպայման ու անհրաժեշտ գործարան չէ ապրելու համար. 2) ստամոքսի գործողու- թեան նշանակութիւնը խիստ մեծացած է. 3) մարդու ընդունած ջրով և պինդ կերա- կուրները կարող են առանց ստամոքսի էլ մար- տնչել: 4) մարդու ստամոքսի ընդհանուր գրգռելու ստամոքսի կորստով չէ փաստանում. 5) ստամոքսի գլխաւոր գործը նրանումն է կայանում, որ մարդու ընդունած կերակուրը պահել, մարսել, մանրացնել և բաժանել. 6) ստա- մոքսի քիմիական գործունէութիւնը (յուժուր) մարդու թիւնն միւս գործարաններն էլ կարող են կատարել և 7) ստամոքսային հիւթի մար- տորութեան վերաբերեալ՝ մինչև այժմ խիստ մեծ նշանակութիւն էր յատկացրած:

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ԼՈՒՆԻՆՆ, 7 մայիս. — Պատգամաւոր- ների ժողով: Կիւմրուկէր հարցնում է, թէ կառավարութիւնն ինչ մտադրու- թիւններ ունի Վէյ-Քայ-Վէյի վերաբեր- մամբ, և քննադատում է 2 հմբերէլնի ճա- ւր: Սուրբին մերժում է 2 հմբերէլնի ճառի քննադատութիւնը, որովհետև խըն- դիլը սկզբից չէր յայտարարած, և ճառի լոպանդակութիւնը իրեն յատկի չէ: 2-ի- նաստանի վերաբերմամբ Սուրբին ասաց, որ չինաց կառավարութիւնը, ի հարկ է, թող է, բայց ոչ որ չի կարող սնդիլ, որ 400 միլիոն ժողովուրդը վերջնական- անպէս ընկճուած է Վէյ-Քայ-Վէյի գրա- նուածով: Անդրան միայն կամենում էր 2 ինաստանի քաջաթիւն ներշնչել հար- կաւոր դէպքում ընդդիմադրելու թշնամի- ներին: Անգլիան մտադիր է աջակցել 2 ինաստանի բարբոթութեանը սեփորմնե- րով: Այդ բարի գործը կատարելու հա- մար, շարունակեց Սուրբին, մինը բարեկամ կըմանք բոլոր պետութիւն- ներին, որոնց հետ մենք կարող ենք շփուել: ՄԱԳՐԻՎ. — Նոր միլիտարութիւնը կող- մակերպուեց. Սաղատան — նախագահ, Լէօն Կասախիօ — արտաքին գործերի մի- նիստը, Գրոյզարդ — արդարադատութեան միլիտար, Կորբէ — ղինուորական մի- նիստը, Աունն — ծովային միլիտար,

Յունականութիւնը — ֆինանսները միլիտար, Ռոմիր-Գիրսն — գաղութները միլիտար: Ստղաստանի ցուցակը ներկայացրեց թա- գուհուսն ի հաստատութիւն: ԲՆԵԳՐԱԳ. — Նորին Մեծութեանը վի- բարարուելուն համար մեղադրուող Պաշի- շին դատարանն արդարացրեց:

ԹԵՐ ԵՒ ԴԵՍ

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

I. Պարն խորագրով, Որովհետև իմ միտքնակից Սիմէօն քա՛հ. Երբստամենցը միշտ սովորութիւն ունի իրական փաստերը ուրանալու և ինքով իրելու, մինչդեռ նրանք լոյ- սի պէս փայլում են, որոնց թումն է և՛ ծաղիկազարդ խոտը միջնադէպը, վասն որոյ ես ինձ պատիւ չեմ համարում Աշ- տուհետեւ նրա հետ բանակուի մտնելու: Եթէ ես պատասխանէի նրա վերջին նա- մակին իմ դէմ («Նոր-Գար», № 68)՝ ի ջոյց պէտք է հանել նրա ամբողջ գոր- ծերի լուսանկարը. բայց այդ չեմ անում ի պատիւ հոգեւոր կոչման, թողնելով, որ իրենք զգան և ցախն իրենց նման փոք- ձուած (?): 20 տարուայ քահանայի տա- րօրինակ սխալները, և՛ ս իրենց վար- մանքով մեր եկեղեցու ժողովրդականնե- րի մէջ արտունջներ յարուցանելու վրայ, իսկ միտքարուն Չատին իրենց «Նամ- ըոյրները» յառաջացած ընդհանուր հո- մերական ծիծաղով:

«Ո՛վ ժամանակներ, ո՛վ բարբեր»՝ Նորընծայ Գրեկորի քա՛հ. Երգիկանց: Թիֆլիս, 28 ապրիլ:

II. Կարկառով «Նոր-Գար»-ի 71-րդ համա- րում Խոջի-Վանքի մասին կողմակի աղ- բրկները խորագրութեամբ հարգուած մի լուրը, որ ուղղակի ինձ է վերաբե- րում բոլոր անախորժ գլխերի պատճա- րը, այժմ պարզ կը համարեմ հը- բազարափա պատասխանել իմ հասցէին ուղղած այդ անախորժ գրութեան: Գլխատուն իւր խօսքով մի կարգ ան- ախորժ գլխերից միայն մի օրինակ յառաջ է բերում անխորժ թէ՛ «Երբեմն ննջեցեալը տանում են հանգստարան և սպասում, որ գերեզմանը նոր փորեն և այլն և այլն»: Այնպիսի այս է միայն, որ անցեալ ապրիլ ամսի սկզբներին նըն- ջեցեալների շատութեան պատճառով, սխալմամբ ի հարկէ, մուտացութեան մի գլխը եկաւ և ժամանակին գերեզման չը պարտատուցուց, և ո՛չ թէ՛ գողի՛ լրա- տուի ասած ի նման երբեմն, որպէս թէ՛ քանի-քանի անգամներ պատահած լինին այդպիսի վէպեր, լաւ լսեցէք յարգելի ընթերցողք, իմ 15 տարուայ երկար պաշտօնավարութեան ընթացքում, որ զբեթէ 14,000 ննջեցեալների պատուէր կմ ստացել, ո՛չ մի այդպիսի վէպ չէ պատահել, բացի այս մի միակ անդամից, վկայ են իմ ասած թիֆլիսի քահանա- ների ամբողջ գառակազար, ինչպէս և յարգելի հասարակութիւնը: Ես կարծում եմ, որ թէ՛ արժանապատիւ հայերը և յարգելի հասարակութիւնը այս մի ան- դամուայ պատահական մտացութեան ներդրումն աշքով կընային: Իսկ թէ՛ որ- քան ներքի է պատահական մի գլխըով 15 տարուայ ծառայութիւնը դատել և առ ոչինչ համարել, այդ կըթողնեմ ըն- թերցողներին վճակուի:

Պ. լրատուն չզգլիտեմ ինչն իսկ սկի- նարկներ է գրում առանց մի որ և է քան հասկացնելու: Ինքը ինչից գիտէ թէ՛ մինչ- չև ց'արդ իւր ասած կարդն ու կանոնը չըկայ, կամ թէ՛ կառավարչի գործերը և հաշիւները վրայ խտուի հոգող չըկայ: Յամենայն դէպս յարգելի պարծնը աւելի մեծ ծոռայութիւն մատուցած կըլինէր վարչութեան արժանապատիւ անդամնե- րին, եթէ փոխանակ նրանց խորհուրդ և իրատ կարգալու, գրական փաստե- րով սպացուցանէր իմ արած այս կամ

այն անախորժ գլխը, կամ որ և է մի գերեզմանը և զանցառութիւնը. ապա թէ՛ ոչ, խորհուրդ կրանք անայտ լրատուին — լուկ՝ քան թէ՛ անտուղի գրել... Խոջի-Վանքի հանգստարանի կառավարիչ՝ Միկաս Մարտանեանց: Թիֆլիս, 1 մայիս:

ՆՈՐ-ԳԱՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԿԱՆԱՆՅ ՀԻՒՆԴԱՆՈՅ

ԾՆԵԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆԻՔՈՎ (Սուրբակ, Սարգսյայ փողոց, № 64)

(ս ե պ հ կ ա ն տ ու ն) Հեռախօս № 230

Երթեկ հիւանդների ընհանուր ըն- դունելութիւնն երկուշաբթի, չորեքշաբ- թի և ուրբաթ օրերը՝ ժամը 2—4 ցի ընկը. վճարը հիւանդների կարողու- թեան համեմատ, մասնաւոր ընդունելու- թիւն ամենայն օր՝ ժամը 8—10 առա- տուհան—վճարը 2 ր.: Գիշերովիկ հի- ւանդներ և ծննդաբեր կանայք ընդուն- ւում են զիշերուայ և օրուայ ամեն ժա- մանակ, բայց այդ մասին առաջուց տե- ղեկութիւն պիտի արուի. վճարը ուրա- ռում է ըստ դատարարների: 20նկուրները ձրի են: Գիշերովիկ իր քա՛հ ան- ժուր ընդունողները վճարում են 1 ր 50 կ. մինչև 8 ր. մի օրուպիշերուայ համար. ծննդաբեր կանայք ըստմա- մունքը մասնորները—1 ր. մինչև 5 ր. մի օրուպիշերուայ համար: Երկուշաբթի ց ապառիւր 10 ր. մինչև 50 ր.: Անդա- մահահառութիւնը ըստ համաձայնու- թեան: Երթեկ բոլոր հիւանդները գե- դեր և նիկութիւն ստանում են ընդունելու- թեան ժամանակ ձրի: 20նկուրների հա- մար 1-ական մահճակալ է գրուած իւրա- քանչիւր բաժանմունքում, ուր տեղաւոր- ւում են նրանք տեսչի և նրա պ. պ. ընկերների առաջակցութեամբ ձրի: Հիւանդանոցի սէր և սեսուշ Մ. ՄԳՐՏԵՆԵՐ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՐՔ ԺԱՄԱՆԱԿՈՎ

ՀԱՅՈՒՆԵՐԻՊ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Տղամարդկանց կատարել և ծրուտի գը- լիարկներ, ամեն տեսակ ձեռնոցներ, գուլպաներ, կանանց սպիտակեղէն և կը- ութներ. ամառային մետաքսայն դու- սիկներ, անկուտներ (կըրմեա), կա- նանց և աղամարդկանց օճիկներ և ման- ժէտներ, փողպատներ, ձեռնափայտեր, կաշուէ զանազան ապրանքներ, արտա- սահմանի պարֆյումերիա, այլ և միլիոնի ուրիշ առարկաներ—կըրողական կու- տարայի արդիւնները:

ԲՈՒՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆԵՐԸ ՆՁՆԱՆԻՐ

2ՄՈՎ Ի.ՋԵՅՐԵՆ ԵՆ Խոջուտ կմ յարգայ հասարակութեանը, և մանուաղ իմ գեղեցիկն, բայց չթողնել այս հազուադէպ ժամատուր և օրուտ քաղկ այս դէպքից:

ՄԱԳՐԱՅԻՆ

ԳԱՐԻԷԼ ՉԱՐԱԹԻԱՆՈՎԻ

Գործընկայ փողոց, Սարաջիկ ստուն: (1019) 10—10

ՀԱՐԿԱՌՈՐ Է

ՏՆԱՅԻՆ ՎԱՐԺՈՒՅԻ

գաւառական քաղաքում՝ մի լու- ընտանիքի մէջ հայերէն ու սու- սերէն պարսպիւտ երկու երե- խայի հետ: Պայմանները շատ յա- ջող են: Գիմի «Նոր-Գար»-ի խըմ- բազրատուն գրասենեակը, Պետ- րովի տարանին կից, Գողովիակի պրոպագանդի վրայ, ժամը 1—2-ր: (1029) 2—2.

ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍՈՆ Ա. ՏԵՐ-ՅԱԿՈՎԵԱՆԻ Ընդունում է երթեկ, կրամ օշակտար և գիշերովիկ աշակերտ- ներ: Պատրաստում է զիմնագրաների, կաղնիների կորպուսի, զեմիւններների, ըհարական և այլ ուսումնարանների համար: Փոքր պատրաստակում երկրանի ընդունում են ստանց թըն- նութեան, վեց տարեկանից սկսած: Ուսումնարանում ուսուցանում են բարձրագոյն ուսումն ստարտած մասնագէտներ, զիմնա- գրական ուսուցիչներ: Աւանդելի առարկաներն են՝ կըրմ, սուտայ, հայոց, ֆրանսիական, գերմանական, լատինական, յունաց և վրաց լե- դունիք, թարգմանութիւն, ալգեբրա, երկրաչափութիւն, աշխարհագրու- թիւն, պատմութիւն (սուտայ և ընդհանուր), բնական գիտութիւն, նը- կարչութիւն, գրութիւն, երգեցողութիւն: Ուսումնարանում կայ ամեն օր զերմանական և ֆրանսիական լեզուների պրակ- տիկա: Հայցե՛ք՝ ТИФЛИСЬ, Гановская ул., № 11. 3-րդ գիմնա- դիայի մոտ: 10—4

УДОБЛЕЯЙТЕ ДУХИ, «Капризъ Жевы» МЫЛО «ВЕЛЮТИНЪ ИЛИЗАБЕТЪ» АРОМАТЪ ПРИДАЕТЪ КОЖЬ НѢЖНОСТЬ И БЪЛИЗНУ С. ПЕТЕРБУРГСКОЙ ТЕХНО-ХИМИЧЕСКОЙ ЛАБОРАТОРИИ С. ПЕТЕРБУРГЪ, КОЛОМЕНСКАЯ УЛИЦА, Д. № 12. МОСКВА, НИКОЛЬСКАЯ Д. ШЕРЕМЕТЬЕВА, ВАРШАВА, НОВЫЙ СВѢТЪ 37. М) № 52242) 8—7

Ա. Ի. ՊԵՏՐՈՎԻ

ՏԳԱՐԱՆԸ

(Թիֆլիս, Գողովիակի պրոպանդիս, սուն № 12)

Երկուշաբթում արէ, ստացուած են նոր բազմատեսակ տատեր, զանազան պոլիտիկամներ հարսանիքների, երե- կոյթիների, հրաւիրաթղթերի, ճաշկերպիների, խորտկա- ցուցակների համար և այլն: Տպագրում է ամեն տեսակ լրատուների և գրքեր արքունական և մասնաւոր հաստատու- թիւնների համար առևտրական գրքեր, հաշիւներ, ծրար- ների մակագրութիւններ և այլն, այլ և հաշտարար գա- տարանների համար կոշտագրեր տեղական բոլոր լեզուներով, արձանագրութիւններ, անգործարարների մատենաներ և այլն: Բրտչիւրներ և գրքեր ուսուցչէն, հայերէն, վրացի- րէն և օտար լեզուներով: Բացի դրանից տպարանում կան մեծ բանակութեամբ քաղաքական տատեր աֆիշների, յայ- տարարութիւնների և ուրիշ ծանուցումների համար: Ռուսերէն, հայերէն և վրացերէն այցիտաները սկսած 1 րուրուց 100 հատի համար գեղեցիկ թղթի վրայ:

Ռուսերէն, հայերէն և վրացերէն այցիտաները սկսած 1 րուրուց 100 հատի համար գեղեցիկ թղթի վրայ:

Թիֆլիսի «Կենդանական գրութանաւանոցում» վաճառուում են

ՀԱՅՈՑ ՊԱՐԻՔԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

անուն աշխատութեան սակաւաթիւ օրինակները: Պատմի. տեսութիւն հոյ լրագրութեան սկզբից մինչև մեր օրերը. ՌԱԶՐԱԹԻՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

(Ս Երժանացած է Սահակ-Մերովիական գրական մրցանակաբաշ- խութեան 1894 թ ուսակնի առաջին մրցանակին) ԳԻՆԸ 3 Բ. ԿԱՄ Տ ԳՐ. Կոյն տեղից կարելի է ձեռք բերել նաև նոյն հեղինակի

«ՀԱՅ ԱՅՈՒՎՆԵՐ»-Ը

Բոլոր հոյ գրամաններ իրենց կենտրոնութեամբ ու երգերի նման- լով. աշուղական արուեստը, աշուղի կեանքը. աշուղը որպէս գրող. հոյ կրթչտական գործիքները և այլն:

ԳԻՆԸ 30 Կ. ԿԱՄ 1 ԳՐ.

ձանապ. ծախսը գրավաճառանոցի վրայ է: 10—8